



... Վերելու նստած կուռքերն այնքան էլ կուռքեր չեն, մարդկային են՝ խեղկաբակ, հարբեցող, սենյախմենաբակ, կամազուրկ... Եւ նրանք չեն քո գլխի տերը, դու ես քո գլխի տերը: ՀՐԱՏ ՍԱԹԵՎՈՅԱՆ

Այունյաց երկիր

Գինը 100 դրամ:

Երեւանի 3 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2013 թ. № 22 (295)

www.syuniacyerkir.am



ՅՈՒՐԻ ՍԱՖԱՐՅԱՆ. «Մեզանում կրթությունն ու արտադրությունը պետք է սերտորեն համագործակցեն»

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2013-14 ուսարվա ընդունելության քննությունների, դրանց կազմակերպման ընթացքի, կրթության ոլորտ ներմուծվող նորարարությունների և դրանց հետ առնչվող խնդիրների մասին է հարցազրույցը Գորիսի պետական համալսարանի ռեկտոր, ֆիզիկայի և մաթեմատիկայի դոկտոր, պրոֆեսոր Յուրի Սաֆարյանի հետ:

– Պարոն Սաֆարյան, 2013-14 ուսարվա ընդունելության քննություններն ավարտվել են, Գորիսի պետական համալսարանը որքանով է կարողացել կատարել նոր ուսումնական տարվա ընդունելության պլանը:

– Այս ուսումնական տարվա ընդունելության պլանը կատարել ենք ընդամենը 50 տոկոսով՝ ընդունելով 108 ուսանող: Պետք է նշենք, որ տարեցտարի դիմորդների հոսքը պակասում է՝ պայմանավորված արտագաղթով, ինչպես նաև շրջանավարտների թվի պակասով: Եթե համեմատելու լինենք տարբեր տարիների ընդունելության տվյալները, ապա կարող ենք ասել, որ գրեթե միշտ էլ նույն պատկերն ենք ունենցել՝ չնչին թվային տարբերություններով: Բայց կա նաև մեկ նրբություն, այն է՝ ներկայումս մեր տարածաշրջանում, բացի ԳՊՀ-ից, գործում են նաև մի շարք այլ ուսումնական հաստատություններ, որտեղ նույնպես երիտասարդները նպատակահարմար են գտնում ուսումնառություն ստանալ: Մյուս կողմից էլ ընդլայնվել է ուսուցանվող արհեստագործական մասնագիտությունների ցանկը, եւ զանազան մասնագիտություններ ձեռք բերելով՝ հետագայում շրջանավարտներն ավելի հեշտությամբ կապահովվեն աշխատանքով, այսինքն՝ աստիճանաբար վերանում է «մոդային տուրք տալով» բուհական կրթություն ձեռք բերելու սովորույթը, մարդիկ ավելի իրատեսական են սկսում մտածել:

– Դիմորդներն ամենաշատը ո՞ր մասնագիտություններն են նախընտրել:

– Պետք է ասենք, որ բոլոր մասնագիտությունների գծով էլ թափուր տեղեր ունենք: Տնտեսագիտության գծով ունենցել ենք 34 դիմորդ, բայց ընդունվել է 17 հոգի, մաթեմատիկայի գծով ընդունվել է 8 հոգի (3 տարի է այդ ֆակուլտետում ընդունելություն չկա), կենսաբանության գծով՝ 8 հոգի, դեղագործական եւ քիմիայի գծով՝ 10 հոգի: Հունամիտար մասնագիտությունների գծով դիմորդների հետաքրքրությունն ավելի շատ է, բայց ունենք ընդունելության հետեյալ պատկերը. իրավագիտության ֆակուլտետ՝ 5 հոգի, պատմության ֆակուլտետի համար դիմորդներն ավելի շատ են եղել, բայց ընդունվել է 13 հոգի, բանասիրության ֆակուլտետ (հայոց լեզու եւ գրականություն)՝ 17 հոգի: Հեռակա ուսուցմամբ ընդունելությունը դեռ չենք ծարունակությունը՝ էջ 3

Երիտասարդության միջազգային օրը՝ 4-րդ անգամ

ԱՎԱՆԴՈՒՅԹ

Օգոստոսի 12-ին՝ Երիտասարդության միջազգային օրը, Սիսիանի Սիսակ Նահապետի անվան հրապարակում հավաքված երիտասարդները հպարտությամբ կրում էին Համո Սահյանի պարկերով կրծքանշան: Երիտասարդության ուժն ու միասնությունը խորհրդանշող պատկերների շարքում նաև սահյանական փողերով պատրաստներ էին՝ «Քնամ հովերը շնչեմ

Գյազբեկխա...», «Ես չեմ կարող չհավաքավալ Կռունկների վերադարձին...»:

Սիսիանում արդեն ավանդական դարձած երիտասարդական արշավն այս տարի նվիրված էր Համո Սահյանին: Նախ ծաղիկներ՝ բանաստեղծի արձանին, այնուհետև այցելություն նրա ծննդավայր եւ ներշնչանքի աղբյուր Լոր գյուղ, որտեղ Հայաստանի սցենարիստների հիմնադրամի շնորհիվ շուտով վերջնական տեսքով կավարտվի Համո Սահյանի տան վերանորոգումը:

«Դու իմ միակն էիր ինչպես Հայաստան, Տանն ճրագն էիր ու ծուխն էիր տանս...», – բոլոր հավաքվածների շուրթերին էլ սահյանական տողեր են, սահյանական են տրամադրությունը, բնության ընկալումն ու ապրումները:

«Յուրահատուկ զգացողություն է լինել այստեղ՝ նրա տան շրջակայքում, որովհետև հնարավոր է նաև, որ շատ հաճախ նա կանգնել է իմ կանգնած տեղում: Այստեղ ես շատ լավ զգում եմ նրա ներկայությունը, նրա շունը: Ով չի եղել Լորում, կարողավ նրա բանաստեղծությունները՝ ամբողջովին չի կարող պատկերացնել այն, ինչ Սահյանը նկարագրել է նրա Լորագետը, նրա լեռները, նրա բնությունը», – ասում է Լորեստա Պետրոսյանը, ով առաջին անգամ չէ Լորում, սակայն, ինչպես ինքն է խոստովանում, այս անգամ բոլորովին այլ զգացողություն ունի:

Հարյուրավոր արշավականներից բացի Սահյանի տան բակում են նաև բազմաթիվ լորե-ծարունակությունը՝ էջ 4

Գետաթաղ. Եղիա մարգարեի անունը կրող սրբավայր-սարագագաթին օծվեց նորաձագ խաչը

ՀՈԳԵՎՈՐ

Օգոստոսի 16-ին Սիսիանի տարածաշրջանի Գետաթաղ գյուղում տոնական տրամադրություն էր թեւածում: Գյուղի արեւելակողմում՝ երկնահաս լեռնագագաթին նորակերտ խաչը պետք է օծվեր, ինչի համար հավաքվել էին գյուղի բնակիչները՝ մանկահասակից մինչև տարեց, հանրապետության այլ վայրերում բնակվող գետաթաղցիներ, հարեւան գյուղերի՝ Լեռնաշենի, Դարպասի, Լորի, Լծենի, Շամբի ներկայացուցիչներ, հյուրեր Սիսիանից, մարզկենտրոնից ու մայրաքաղաքից:

Նշանավոր այդ օրվան Գետաթաղը պատրաստվել էր մոտ մեկ տարի: Նախ գյուղից մինչև լեռնագագաթ առաջին անգամ դաշտամիջան ավտոճանապարհ էր բացվել (5 կմ երկարությամբ), այնուհետև լեռնագագաթին կանգնեցվել էր մետաղաշեն խաչը՝ 7 մ բարձրությամբ: Իսկ լեռան հարավային լանջին՝ գագաթից մոտ 100

մ ներքե, կառուցվել է անտառային հանգրվան՝ քսան նստատեղով, սառնորակ աղբյուրով, որտեղ, հատկապես ամռանն ու աշնանը, մարդիկ կարող են իրենց հանգիստն անցկացնել:

Եվ խաչի տեղադրման ու ճանապարհի բացման, եւ անտառային հանգրվանի կառուցման նախաձեռնողն ու իրականացնողը Գետաթաղի Դավթյանների գերդաստանն էր, ավելի ստույգ՝ տեր Ալբերտ եւ տիկին Մելիքյան Դավթյանների որդիները՝ Արթուրը, Վրեժը, Խորենը: Արթուրը Գետաթաղի գյուղապետն է, Վրեժն ու Խորենը մոսկվայաբնակ են:

Եղբայրները ցավով են նկատում, որ շրջանի երբեմնի նշանավոր գյուղերից մեկը՝ Գետաթաղը, տարիներ շարունակ ահա հոգեվարք է ապրում, եւ փորձել ու փորձում են կանգնեցնել հետընթացը, հնարավորինս վերականգնել գյուղի կորսված-մոռացված ավանդույթները: Սկսել են խրախուսել երիտասարդ ընտանիքներին՝ յուրաքանչյուր երեխայի ծննդյան առիթով ծարունակությունը՝ էջ 6



202è - 2013

Կապանի քաղաքապետարանի մեկ ամիսը



Համագործակցությունի շահ մարզկենտրոնի մաքրության

Օգոստոսի 21-ին տեղի ունեցավ հանդիպում Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի և «Ուրբան կայուն զարգացման» հիմնադրամի ներկայացուցիչների միջև: Ներկա էին նաև Կապանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Նորայր Հարությունյանը, համագործակցության ծրագրի ավագ փորձագետ Սամ-

վել Նազարյանը և քաղաքապետի խորհրդական Տիգրան Թադևոսյանը:

Հանդիպման նպատակն էր քաղաքի տարածքում ազատվել պոլիէթիլենային տոպրակներից և ստեղծել էկոլոգիական մաքուր միջավայր:

Քաղաքապետը մեծ ոգևորությամբ ողջունեց ծրագիրը՝ հավատարմացնելով, որ այն մեր քաղաքացիների համար կստեղծի էկոլոգիական մաքուր միջավայր, և որն էլ հասարակության մեջ կծեւավորի նոր մշակույթ, ինչը շատ շահեկան կլինի կապանցիների համար:

Հիմնադրամի նախագահ Արմինե Թուխիկյանը հպարտորեն բարձրաձայնեց, որ սույն ծրագիրը կապանցիների հետ առաջին համատեղ աշխատանքն է, որը շարունակական բնույթ կկրի: Նշվեց, որ ծրագիրն ունի ոչ միայն ուսուցողական, այլև սոցիալական բնույթ: Այն կանայք (մոտ 30 հոգի), ովքեր գտնվում են սոցիալապես անապահով վիճակում, աջակցելով ծրագրին՝ կստանան դրամական օգնություն: Տիգրան Թուխիկյանը հավելեց, որ կազմակերպությունը տեղական է, ուստի և իրենք ֆինանսավորում են հայթաթել սույն ծրագրի համար: Եվ ստացել են մի շարք կազմակերպությունների աջակցությունը՝ ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հիմնադրամ, «Կապան» բարեգործական հիմնադրամ:

Մինչ պայմանագրի ստորագրումը պարզաբանվեցին որոշ հանգամանքներ, որոնք պետք է համապատասխանեն համայնքի պահանջներին: Քաղաքում կտեղադրվի 42 հասարակ և 90 պլաստիկ աղբարկղ: Ամբողջ ծրագրի իրագործման համար տրամադրվել է 26 միլիոն 621 հազար դրամ, որից 420 հազարը «Կապան» հիմնադրամը: Ստորագրվեց համագործակցության պայմանագիր: Ծրագիրը մեկնարկեց նույն օրը և, ինչպես նշեցինք, կկրի շարունակական բնույթ: Աշոտ Հայրապետյանն «Ուրբան կայուն զարգացման» հիմնադրամին նվիրեց բարձր Կապան քաղաքի պատկերով:

Ուսանողական ամառ-2013

Օգոստոսի 7-ին մեկնարկեց արդեն ավանդույթ դարձած «Ուսանողական ամառ-2013» միջոցառումը, որը համախմբում է հանրապետության տարբեր ուսումնական հաստատություններում սովորող կապանցի ուսանողներին, նրանց առօրյան դարձնում առավել հագեցած, հաճելի և օգտակար, հնարավորություն ընձեռում նոր ծանոթությունների: Կապանի մշակույթի կենտրոնի մերձակա հրապարակում տեղի ունեցած բացման արարողու-

թյանը ներկա էին Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, փոխքաղաքապետ Ռուդոլֆ Սարգսյանը, փոխմարզպետ Վաչե Գրիգորյանը և «Ռանդի Փրիշ Մեթալս Կապան» ընկերության համրության հետ կապերի պատասխանատու Գայանե Թադևոսյանը: Ժապավենը կտրելու պատիվը տրվեց Աշոտ Հայրապետյանին, ով շնորհավորեց ուսանողներին՝ մաղթելով անմոռանալի օրեր և պահեր: Քաղաքապետը նաև նշեց, որ նախաձեռնությունը ոչ միայն ուսանողների հանգիստը կազմակերպելու նպատակ է հետապնդում, այլև ուղղված է երիտասարդների քաղաքացիական գիտակցության բարձրացմանը: Հանդիսությանն առաջին անգամ հնչեց միջոցառման օրհներգը, որից հետո ուսանողները ներկայացրին երաժշտական կատարումներ, հունորային բեմականացումներ և պարեր: Նախաձեռնող խմբի անդամ Հայկ Կարախանյանի հաղորդմամբ՝ հուլիսի 1-25-ը «Ամառ-2013»-ին մասնակցելու համար հայտագրվել էր հարյուրից ավելի ուսանող:

Միջոցառումը, որ ֆինանսավորում էր քաղաքապետարանը, տեւեց մինչև օգոստոսի 17-ը: Ընթացքում կազմակերպեցին մշակույթի օր՝ այցելություն բանգարաններ, սպորտի օր՝ վազք, առողջ ապրելակեր-

նին՝ հույս հայտնելով, որ մեկօրյա աշխատանքը քաղաքապետարանում կտա իմացություն և փորձ: Ուսանող «պաշտոնյաները» մեկ օրվա ընթացքում ձեռնարկեցին մի շարք աշխատանքներ՝ շրթնէկոլոգիայի վերահսկողություն շարենցի փողոցում, Գարեգին Նժդեհի արձանի վրա և շրջակա միջավայրի մաքրում, քաղաքի լուսավորության բարելավում և այլն:

Քաղաքապետին կից խորհուրդը գործում է

Օգոստոսի 15-ին Կապանի քաղաքապետարանում տեղի ունեցավ Կապան համայնքի ղեկավարին կից քաղաքաշինության, ճարտարապետության ու մշակույթի խորհրդի նիստ: Նախ քննարկվեց և հաստատվեց խորհրդի կանոնադրությունը, ըստ որի՝ խորհրդի հիմնական նպատակն է քաղաքաշինության, ճարտարապետության, մշակույթի բնագավառներում երաշխավորությունների, առաջարկությունների մշակումը, այդ ոլորտներում համայնքի բնակիչների շահերի պաշտպանումը, ինչպես և տեղական ինքնակառավարման մարմինների ու շահագրգիռները համայնքային կարեւորագույն խնդիրների վրա հրավիրելը: Հասարակական միավորման անդամները հիմնականում ճարտարապետներ են, լեզվաբաններ, պատմաբաններ և այլն: Այնուհետև որոշում ընդունվեց Կապան-Գլենդել քույր քաղաքների բարեկամությունը խորհրդանշող հուշարձան տեղադրել մարզկենտրոնում (ինչի համար սահմանվեց առաջարկությունների ներկայացման ժամկետ), հրապարակել Կապանը ներկայացնող գրքույկ (կամ բուկլետ), ինչպես և Սմբատ Ստեփանյանի՝ Կապանի պատմությանն առնչվող գիրքը: Քննարկվեց



պին նվիրված միջոցառումներ, եռօրյա վրանային ճամբար Բաղաբերդում, մեկօրյա այցելություն Արցախ: Օգոստոսի 14-ին Կապանի մշակույթի կենտրոնում անցկացվեց «քաղաքապետի ընտրություն», առաջարկվեց քաղաքապետի երկու թեկնածու՝ Տիգրան Ավագյանը և Բագրատ Բաղդասարյանը: Հինգ ծայրի տարբերությամբ Կապան համայնքի ղեկավար ընտրվեց Տիգրան Ավագյանը, ով իր աշխատակազմով ներկայացավ քաղաքապետարան: Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը շնորհավորեց Տիգրա-

նազեզուրի գոյամարտի կապանցի հերոս Պողոս Տեր-Դավթյանի հիշատակը Կապանում, Սիսիանում և նրա ծննդավայր Վերին Խոտանանում հավերժացնելու հարցը:

Խորհրդի նախագահ ընտրվեց Շնավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարանի տնօրեն Արմեն Գեւորգյանը, քարտուղար՝ պատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայության պետ Աստղիկ Հակոբյանը:

ԷՋԻ ՆՅՈՒԹԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵՅԻՆ ՆՈՒՐԱՐ ԴԱՎԹՅԱՆ ՈՒ ՄԱՆԵ ԴԱՎԹՅԱՆԸ



Ճաղօ՞ւ օձ

Գեղարթաղ. Եղիա մարգարեի անունը կրող սրբավայր-սարագագաթին օծվեց նորաձագ խաչը



Սկզբը՝ էջ 1

հատկացնելով դրանական պարգև: Ստանձնել են գյուղի գլխավոր փողոցի գիշերային լուսավորության ֆինանսավորումը: Նպատակ ունեն հիմնանորոգել գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին (կառուցված 1650 թ.):

— Եղորս՝ Խորենի հետ, ապրում եւ աշխատում ենք Մոսկվայում, առանձնապես մեծ ձեռքբերումներ չունենք բիզնեսում, բայց մեր հայացքն ուղղված է հայրենի Գետաթաղին, ու ձգտում ենք ունեցած սուղ միջոցներով աջակից լինել գյուղի խնդիրների լուծմանը, — պատմում է Վրեժ Դավթյանը:

Բայց Եղիա (Եղիակ) սարագագաթին խաչ կանգնեցնելու գյուղացիների վաղեմի երազանքի իրագործման համար առիթ դարձավ մի դիպված՝ տեղի ունեցած գրեթե մեկ տարի առաջ՝ 2012-ի հուլիսին: Լոր գնալիս ճանապարհի բարձունքից ընկնում ու իրաչքով փրկվում է Վրեժ Դավթյանի յոթնամյա Միլա դուստրը (միայն թեւն է կտրվում): Մի տեսանող կարծիք է հայտնում, որ երեխան փրկվել է գյուղի դիմաց գտնվող սրբավայրի զորությամբ, ինչը երեխայի ծնողների մոտ երախտագիտության հավելյալ զգացում է առաջ բերում առ սրբավայր, որ կոչվում է Սուրբ Եղիա կամ Սուրբ Եղիակ: Ու որոշում են շենացնել այդ սրբավայրը, ճանապարհի հարթել դեպի լեռնագագաթ:

Առհասարակ Սուրբ Եղիան Լորածորի գյուղերի բնակիչների համար դարձել է վեր եղել ու մնում է իբրև գլխավոր սրբավայր կամ պաշտամունքի վայր: Հատկապես գետաթաղցիներն իրենց իղծերը, մտածումներն ու հառաչանքները երկիցն ի վեր առաքելու համար բարձրացել ու բարձրանում են Սուրբ Եղիա՝ ակնկալելով, որ իրենց խոհերը կհասնեն ամենագութ Աստծուն: Եվ դարձել շարունակ այդ սրբավայրը սիրտ է տվել գրկվածին, տարակույսի մեջ հայտնվածին: 94-ամյա Բենիամին Պողոսյանը պատմում է, որ Մեծ հայրենականի տարիներին էլ տարեց գետաթաղցի-



ները բարձրանում էին Սուրբ Եղիա եւ «մարմնավոր շուրթերով ուղերձ կարդում բարձրյալ Աստծուն», նրանից աղերսում խաղաղություն, ռազմաճակատ մեկնած իրենց մերձավորների կյանքի ապահովություն: Բենիամին Պողոսյանի հավաստմամբ՝ սրբազան այդ գագաթը նաեւ սիրո ու երջանկության բաշխիչի խորհրդանիշ է եղել: Երիտասարդ տղաներն ու աղջիկներն իրենց երազանքներին հասնելու համար բարձրանում էին այնտեղ եւ Սուրբ Եղիայի բարի միջամտությունը խնդրում: Երաշտի ժամանակ էլ կանայք էին

բարձրանում սրբավայր, քար իջեցնում այնտեղից ու գցում Ծեմաթաղի գետի մեջ, ինչից հետո ամենագոր բարձրյալն անձրեւ էր պարգևում պապակ դաշտերին:

Եղիա մարգարեի մասին գիտեն գրեթե բոլոր գետաթաղցիները: Նա, ըստ ավանդության, բացառիկ հեղինակություն վայելող մարգարեներից էր, ում մասին տեղեկություններ ենք իմանում ոչ միայն «Հայսմավորքից» (1706թ. տպագրություն), այլև հայերեն ձեռագրերից: Ավանդագրույցի համաձայն՝ Եղիա մարգարեն մ.թ.ա. 9-րդ դարում նշված լեռնա-

գագաթից է կրոնաբարոյական քարոզ իղել Լորածորի բնակիչներին, քանզի միայն այդ բարձունքից է, որ երեւում են Գետաթաղը, Լորը, Լեռնաշենը, Դարպասը, մասամբ՝ Լծենի մերձակայքը (դրանում համոզվեցինք, երբ բարձրացանք լեռնագագաթ): Եվ դրանից հետո այդ գագաթը պաշտամունքի վայր է դարձել, իսկ Քրիստոսի լույսը ճառագայտաց հետո՝ սրբավայր՝ փոքրիկ մատուռով, որի ավերակը՝ խաչքարով, պահպանվում է մինչև օրս:

Եղիա մարգարեի հայտնությունից դարեր հետո այդ գագաթին ահա տեսնում ենք 7 մ բարձրությամբ մետաղյա խաչը: Այդ գագաթին 2013 թ. օգոստոսի 16-ին հաճելիորեն տեսնում ենք Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանին, ով անձամբ էր ստանձնել խաչի օծման աստվածահաճո առաքելությունը, ինչն էլ իրականացվեց առավել նախանձախնդրությամբ ու նվիրումով:

Նորաօծ խաչի շուրջ պար բռնեցին գետաթաղցիներն ու հյուրերը:

Տոնախմբությունը շարունակվեց գյուղամիջում: Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահի օրհնությամբ ու բարեմաղթանքներով տեղի ունեցավ մատաղի սրբազան արարողություն:

Տոնական օրվան երաժշտական կատարումներով յուրօրինակ ու հաճելի երանգ հաղորդեց Եղեգնածորից ժամանած գեղարվեստական համույթը: Ուշագրավ էին հատկապես մեներգիչ Սոս Սարգսյանի կատարումները:

Այլևս պատմություն դարձած օրվա բոլոր միջոցառումները, կարելի է ասել, անցան անթերի, ինչը պայմանավորված էր գյուղապետարանի, գյուղապետի սիսիանցի մտերիմների, Սյունյաց թեմի առաջնորդարանի եւ, իհարկե, տարածաշրջանում լավագույն կազմակերպիչ վաստակած համբավ ունեցող Միտ Եղիագարյանի հասարակական-քաղաքական գործչի միասնական ու խելամիտ ջանքով:

Գյուղապետ Արթուր Դավթյանը, ով տոնակատարության գլխավոր պատասխանատուն էր, մեզ հետ զրույցում անդրադարձավ օրվա խորհրդին. «Գետաթաղը դարձրի խորեց եկող հոգեւոր արմատներ ունի, այնպես որ այսօրվա տոնակատարությունը, Սուրբ Եղիա գագաթին սրբազան խաչի տեղադրումը պատահական երեւույթ չեն: Մենք դարձրել շարունակ ազգովի նաեւ հոգեւորված ենք ապրել, եւ կարծում են, որ այս իրադարձությունն ինչ-որ չափով կխթանի գյուղի հոգեւոր արթնությունը: Շուտով էլ լեկտրական հոսանք կունենանք այնտեղ, եւ խաչը գիշերները լուսավորության մեջ կլինի: Բայց այս ձեռնարկումով գործնական այլ խնդիր ենք նաեւ լուծել: Գյուղից մինչև լեռնագագաթ ճանապարհ կառուցելով՝ հնարավորություն ենք ստեղծել, որ գյուղաբնակներն ավելի դյուրին ու արդյունավետ օգտագործեն տարածքի համալսանստերն ու արտոնները, անտառային գեղատեսիլ վայրերն ու սառնորակ արքյուրները: Տարիներ շարունակ մեր գյուղացիները (նաեւ դրսում բնակվող գետաթաղցիները) երազել են ավտոճանապարհ ունենալ մինչև Սուրբ Եղիա. այդ երազանքն է այսօր ի կատար ածվել»: Գյուղապետը պատասխանեց նաեւ մեր՝ համայնքնե-

րի խոշորացման կառավարական հայեցակարգի նպատակահարմարությանն առնչվող հարցին. «Եթե համայնքների խոշորացմանը չեն հաջողվելու կոնկրետ գործեր գյուղապահպանության առումով, ապա խոշորացումը ոչ խոհեմ քայլ է: Ավելին՝ համայնքների խոշորացմանը փոքր գյուղերը նոր եւ լրջագույն հարված կստանան, մի քանի ընտանիքով էլ կպակասի ամեն մի գյուղի բնակչություն, տեղական իշխանությունն ավելի կհեռանա գյուղացուց, մարդկանց կոնկրետ հոգսերն ավելի անտեսանելի կդառնան իշխանությունների կողմից: Կառավարությունը համայնքների խոշորացման արմատական քայլեր պետք է ձեռնարկի լեռնային գյուղերը փրկելու համար, այլապես հետո անելանելի է լինելու, թեւ հիմա էլ արդեն հեշտ չէ»:

Գետաթաղից վերադառնալիս հիշեցինք այդ գյուղի պատմական դեմքերից մեկին՝ նշանավոր ճանապարհորդ Փիրգասին, ով գյուղի Բաստամեցոց (Պաստամեցոց) ազգից էր, Ջաքարեի թոռը եւ Միրզայի ու Հոռոնսիմի որդին, ով գիտական գրականության մեջ հիշատակվում է նաեւ Փիրգաստ Դավանցի հորջորջումով, ում ուղեգրությունը (16-րդ դարավերջ եւ 17-րդ դարակիզը)՝ Արշակ Մադոյանի ծանոթագրություններով, տպագրվել է «Սյունյաց երկրի» 2013 թ. մայիսի 24-ի համարում: Սյունյաց աշխարհի՝ մեզ հայտնի միակ ճանապարհորդի հիշատակը, կարծում ենք, երբեւ պետք է հավերժացվի հայրենի Գետաթաղում, մանավանդ որ, ըստ որոշ պատմաբանների, նրա ելուցական առեղծվածային շրջագայության իրական նպատակը հայրենիքի ազգային- ազատագրական խնդիրների հետ էր կապված:

Գետաթաղից ճանապարհվելուց առաջ էլ մեկնեցինք հարեան Լոր եւ այցելեցինք Համո Սահյանի վերակառուցվող բնակարան: Բավականին աշխատանք է կատարվել այնտեղ, եւ օրերս ավարտին կհասցվի հիմնանորոգման ծրագիրը, բայց... Տպավորություն ունենք, որ մեծ քնարերգուի հայրական տունն այլևս ոչինչ չի պահպանում Սահակ դայու կառուցածից, ու ավելի շատ ժամանակակից չափանիշներով շինված քաղաքային առանձնատուն է հիշեցնում:

Իսկ Լորածորի գյուղերի բնակիչները, ում հետ չփվելու, գրուցելու առիթ ունեցանք տոնական Գետաթաղում, խոսքերը մեկ արած մի մտահոգություն էին հայտնում՝ ե՞րբ է ի վերջո նորոգվելու դեպի Չորերի գյուղեր ձգվող ավտոճանապարհը, որ Շամբի խաչմերուկից սկսած շարունակում է մնալ քանդված ու դժվարանցանելի, որոշ տեղերում՝ համարյա անանցանելի: Եվ խոսքը մի ամբողջ ենթաշրջանի մասին է, լեռնային հինգ գյուղի մասին: Անօգնականության մեջ հայտնված գյուղացիներն այդ հարցով, թվում է, դարձյալ պետք է դիմեն ամենագոր Սուրբ Եղիային, թե չէ մեր իշխանավորները, զբաղված անձնական գործերով եւ իրականությանն անհարող, այլևս չեն տեսնում Սյունիքի բազմադարյա գյուղերի հոգեվարքն ու հառաչը...

ՍՄՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Կապանի N3 միջնակարգում թմրամիջոց են պատրաստել

ԱՐՏԱՌՈՑ

Օգոստոսի 24-ին՝ ուշ երեկոյան ոստիկանության ԿՅԴՊ ԳԿ ԹԱՇԴՊԿ, Սյունիքի մարզային վարչության և Կապանի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ, Կապանի քիմի 3 միջնակարգ դպրոցի դասասենյակներից մեկից, թմրամիջոց պատրաստելու արարածները և պահելու կասկածանքով, բերման են ենթարկվել 1968 թ. ծնված Կարեն Զ.-ն և 1966 թ. ծնված Թաթև Թ.-ն, իսկ դասասենյակների վրա հայտնաբերվել են 5 մլ տարողությամբ չօգտագործված 4 ներարկիչ՝ ասեղներով, 10 մլ տարողությամբ չօգտագործված ներարկիչ՝ ասեղով, 10 մլ տարողությամբ օգտագործված, առանց ասեղի ներարկիչ՝ մուգ դարչնագույն զանգվածով, բանջարի խձուժ, քերված կողային մասերով տասը տուփ լուցիկի, յոթի դատարկ սրվակ, օգտագործված շեղք, ապակյա թափանցիկ սրվակ՝ մուգ դարչնագույն հեղուկով և սեւ զանգվածով, 5 լ տարողությամբ կիսով չափ ջրով լցված պլաստմասե

դույլ, որի մեջ առկա է ջրատաքացուցիչ, 1.5 լ տարողությամբ պլաստմասե շիշ՝ մոտ 300 մլ, բենզինի հոտով հեղուկով՝ սպիտակ փոշենման մատվածքով, և «պիրալզին» տեսակի դեղահաթի 2 դատարկ տուփ: Ոստիկանության հասարակայնության հետ կապերի վարչության հաղորդմամբ, Կարեն Զ.-ն հայտարարել է, որ հայտնաբերված թմրամիջոց է, անձամբ է պատրաստել և պատկանում է իրեն: Նյութերի նախապատրաստման ընթացքում Կարեն Զ.-ն բացատրություն է տվել նաև, որ զանգահարել է ընկերոջը՝ Թաթև Թ.-ին, և կանչել նշված դասասենյակ՝ իր պատրաստած թմրամիջոցից վերջինիս հյուրասիրելու նպատակով: Կարեն Զ.-ի և Թաթև Թ.-ի՝ նշված դպրոց մուտք գործելու հանգամանքները պարզվում են: Դպրոցի պահակը՝ 1950 թ. ծնված Անդրանիկ Թ.-ն, բերման է ենթարկվել բաժին: Նշանակվել են փորձաքննություններ: Կատարվում է հետաքննություն: panorama.am

ԽՈՍՔ ՖԻԾԱՍԱԿԻ
Սեդա Գրիգորյան
Իններորդ տասնամյակի շենին երկրային կյանքին հրաժեշտ տվեց վաստակաշատ մանկաբույժ Սեդա Գրիգորյանը: Ծնվել է 1924թ. հունվարի 15-ին Կապանի Սեւաքար գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Բաքու քաղաքում: 1944-ին ընդունվել է 1949-ին ավարտել է Բաքվի բժշկական ինստիտուտը՝ ստանալով մանկաբույժի որակավորում: Վերադառնալով Կապան՝ աշխատանքի է անցել Արծվանիկ գյուղի տեղամասում: Նրա նախաձեռնությամբ է հիմնադրվել գյուղի հիվանդանոցը: 1953-ին տեղափոխվել է Կապանի մանկական կոնսուլտացիոն կենտրոն՝ որպես տեղամասային մանկաբույժ, 1958թ. ստանձնել է կոնսուլտացիայի վարիչի պաշտոնը: 1966թ. հունիսի 18-

ին Սեդա Գրիգորյանին շնորհվել է հանրապետության վաստակավոր բժշկի կոչում, պարգևատրվել է «Առողջապահության գերազանցիկ» կրծքանշանով, արժանացել պատվոգրերի: Սեդա Գրիգորյանը մանկաբույժների մի քանի սերունդ է դաստիարակել: Ընդ որում դա անում էր անանց սիրով ու նվիրումով, իր գիտելիքներն ու փորձն անմեղատու փոխանցում կրտսեր գործընկերներին: Բարի խորհրդատու էր, վարպետ-դաստիարակ՝ այդ երեւոյթի ամենաընդգրկուն իմաստով: Մարդկային փոխհարաբերություններում և աշխատանքում արդարամիտ էր, անարդարությունների հանդեպ՝ անհաշտ: Խստապահանջ էր նախ իր, ապա՝ գործընկերների նկատմամբ, բայց նաև նրբազգաց ու ներող: Հանգիստ ու անորոր կյանքով չի ապրել. ճակատագիրը բնավ էլ նրա համոզեց բարեհաճ չի եղել, բայց անձնական վիշտը խեղդելով իր մեջ, սփոփանք ու բավականություն էր ստանում՝ ամոքելով մանուկների ցավը: Նրա համար անենամեծ զենահատականը երիտասարդ մայրերի երախտագիտության խոսքերն էին: Սեդա Գրիգորյանը հոգատար մայր էր, ունեցել է չորս զավակ, հինգ թոռ: Առողջապահության ոլորտի անձինք, նրան ճանաչողները սզում են սիրելի բժշկուհու և հմայիչ անձնավորության մահը: Լույս իջնի քո շիրմին, Սեդա Ենդրուկ: «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

Այունյաց երկիր
«ԳՈՎԱԶԳ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է: Մեզ հետ կապվելու համար կարող եք գրել կամ կոչվել: Կապան, Շահումյան 20/32: (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02: syuniacyerkir@mail.ru www.syuniacyerkir.am



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղը հայտարարում է բակալավրի կրթական ծրագրով 2013/14 ուս.տարվա հեռակա ուսուցման ընդունելությունը հետևյալ մասնագիտություններով
Table with 6 columns: Հիֆր, Մասնագիտություն, Բնություններ, Տեղերի քիվը, այդ թվում p.գ, Ուսման վարձի չափը

Մ - մաթեմատիկա, Ֆ - ֆիզիկա, ՀԼԳ - հայոց լեզու և հայ գրականություն, ՕԼ - օտար լեզու (ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն): * - ով նշված ոչ մրցութային զենահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից: ** - ով նշված առարկաների համար՝ թափուր տեղեր առաջանալու դեպքում, այդ տեղերի մրցութային մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշներով նշված առարկաների համար որպես մրցութային զենահատական, կարող են դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների զենահատականը, իսկ պետական ավարտական քննական զենահատականի բացակայության դեպքում՝ տարեկան զենահատականը: Համալսարան վճարովի մրցութային հիմունքներով հեռակա ուսուցմամբ կարող են ընդունվել միջնակարգ, նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն ունեցող անձինք՝ առանց տարիքի սահմանափակման: Դիմորդներին տրվում են հետևյալ արտոնությունները: ա) Նշված կարգավիճակ ունեցող դիմորդները բուհ ընդունվելու դեպքում օգտվում են օրենքներով սահմանված ուսման վարձի լրիվ փոխհատուցման (անվճար) իրավունքից: 1-ին ու 2-րդ խմբերի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամները, համաձայն բժշկատեսչական փորձաքննության գործակալության կողմից տրված երակացության. առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները: բ) Քննությունները դրական միավորներով հանձնած դիմորդներից, պետական բյուջեի միջոցների հաշվին, մրցութային դուրս, ընդունվում են 33 պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն 33 պաշտպանության նախարարության, 33 կառավարությանն առընթեր 33 ոստիկանության և 33 կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքների: Դարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում բուհ են ընդունվում մրցութային դուրս, ըստ մասնագիտությունների նախարարության կողմից հաստատված տեղերի: Քննություններն անց են կացվում սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում: Գիմորդների փաստաթղթերն ընդունվում են մինչև 2013թ. սեպտեմբերի 20-ը յուրաքանչյուր օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) ժամը 10:00-ից մինչև 17:00-ը: Տեղեկությունների համար դիմել 3763 Կապանի մասնաճյուղ, Գ. Արզումանյան փող. 11, հեռախոսներ 5-46-80, 5-34-61, (094)70-80-19: